Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի «Ջրահովիտի Վլ.Աբրահամյանի անվան միջնակարգ. դպրոց» ՊՈԱԿ-ի մաթեմատիկա (15 ժամ), ինֆորմատիկա (3 ժամ) և ԹԳՀԳ (7 ժամ), կերպարվեստ (3 ժամ), երաժշտություն (3 ժամ) և աշխարհագրություն (8 ժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձեւ 1)

2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3. Անձնագրի պատճենը,

4. Ինքնակենսագրություն (Ձեւ 4),

5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից՝ փետրվարի 19-ից մարտի 3-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00- ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա մարտի 6-ին՝ ժամը 15^{00}-ին Արարատի մարզի Ջրահովիտի Վլ.Աբրահամյանի անվան միջն. դպրոցում: Հասցեն՝ գ. Ջրահովիտ, 6-րդ փողոց թիվ 37 : Տեղեկությունների համար զանգահարել (094) 933-699 091-545-610 հեռախոսահամարներով: